

## Մուրադ Օհանյան

### ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՈՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Քանալի բառեր.** Աքեմենյան տերություն, Դարեհ, Քսերքսես, Հերոդոտոս, Քսենոփոն, Պարսք, Մարաստան, Հայաստան, վարչատարածքային կառուցվածք, կառավարման համակարգ, երկրացուցակ, գորացուցակ, արքայից արքա, սատրապ:

Աքեմենյան տերության պատմությունը լուսաբանելու հարցում նշանակալից կամ ուղղակի առաջնային տեղ է հատկացվում հին հունական ժամանակագրական բնույթի աղբյուրներին, ինչը պայմանավորված է աքեմենյան սկզբնաղբյուրների սակավությամբ: Բայց հին հունական աղբյուրները թեև ունեն պատմագիտական բարձր արժեք և աքեմենյան սկզբնաղբյուրների հետ շատ համապատասխանություններ, ընդհանուր առմամբ զնահատվում են որպես պատմավիպական բնույթի ստեղծագործություններ, որոնցում շատ ավելի լայն տեղ են զբաղվում պատմական փաստերին միահյուսված գեղարվեստական հնարանքները<sup>1</sup>: Այս հանգամանքը մեզ պարտադրում է սույն քննությունում առաջնային կարևորություն տալ աքեմենյան սկզբնաղբյուրներին, իսկ հին հունական աղբյուրներին վստահել միայն աքեմենյան աղբյուրների հետ դրանց ունեցած համապատասխանությունների դեպքում:

Կարծում ենք, որ Աքեմենյան սկզբնաղբյուրները պարունակում են դեռևս նկատի չառնված կամ անհրաժեշտ ուշադրության չարժանացած բազմաթիվ տվյալներ ու փաստեր, որոնք կարող են հավելյալ պատկերացումներ տալ և որոշ ճշգրտումներ առաջադրել այդ տերության պատմության վերաբերյալ: Պատշաճ ուշադրության արժանի այդ տվյալները առաջնային դերակատարություն ունեն հատկապես Աքեմենյան տերության կառուցվածքն ու կառավարման կարգերը լուսաբանելու հարցում: Այդ կարգի աղբյուրներից են պահպանված տարբեր ցուցակները, որոնցում թվարկված են աքեմենյան վարչատարածքային գլխավոր միավորները: Դրանք կարևոր տվյալներ են պարունակում Աքեմենյան վարչատարածքային, քաղաքական, հասարակական կառուցվածքների վերաբերյալ: Նույն երկրացուցակները որոշ պատկերացում են տալիս նաև Աքեմենյան տերության կառավարման համակարգերի վերաբերյալ, բայց այդ մասին առավել անմիջական տվյալներ ու պատկերացումներ են պահպանել աքեմենյան դարաշրջանի տարաբնույթ այլ աղբյուրներ, հատկապես Բեհիսթունի տարեգրությունը, վարչարարական փաստաթղթերը և պատկերագրական որոշ նյութեր:

Այս նախնական քննությունում առայժմ մենք կանդադարանանք Աքեմենյան տերության կառավարման կարգերի ու կառույցների վերաբերյալ հիմնականում ընդհանրական պատկերացումներ տվող տվյալների և կբավարարվենք միայն դրանցից հետևող նախնական հետևություններով: Աղբյուրների հարցում նույնպես մենք առայժմ կբավարարվենք միայն աքեմենյան և դրանց համադրվող հին հունական որոշակի սկզբնաղբյուրներով. ստորև մենք կքննարկենք Դարեհ I-ի (Ք.ա. 522-486) տարբեր տարեգրություններում տեղ գտած 5 երկրացուցակները, նրան հաջորդած Քսերքսես I-ից (Ք.ա. 486-

---

*Հոդվածը ներկայացվել է 25.04.2019 թ., գրայնսուվել է 03.06.2019 թ., ընդունվել է տպագրության 12.06.2019 թ.:*

<sup>1</sup> St' u Bury J., "The ancient Greek historians (Harvard lectures)", London, 1909; URL: <https://archive.org/details/ancientgreekhist00buryuoft/page/n7>; Köhnken A., "Der listige Oibares. Dareios' Aufstieg zum Großkönig". Rheinisches Museum für Philologie, 133. Bd., H. 2; 1990, S. 115-137; URL: <https://archive.org/details/DerListigeOibares.DareiosAufstiegZumGroknig1990/page/n0>; Gufler B., Madreiter I., "The Ancient Near East and the genre of Greek historiography"; In: R. Rollinger, – E. Dongen, van (Hg.), Mesopotamia in the Ancient World: Impact, Continuities, Parallels, Melammu Symposia 7, p. 381-396; Münster, 2014; URL: [http://www.achemenet.com/pdf/in-press/GUFLER\\_MADREITER\\_The\\_Ancient\\_Near\\_East\\_and\\_the\\_genre\\_of\\_Greek\\_historiography.pdf](http://www.achemenet.com/pdf/in-press/GUFLER_MADREITER_The_Ancient_Near_East_and_the_genre_of_Greek_historiography.pdf); և այլն:

465) հայտնի մեկ ցուցակ<sup>1</sup> և դրանք կհամադրենք Հերոդոտոսի (Ք.ա. V դ.) «Պատմությունում» առկա սատրապական և գորական 2 ցուցակների հետ: Աքեմենյան տերության հիմնականույցներին վերաբերող այս փաստաթղթերից հետո մենք կանդրադառնանք հին հունական պատմագրությունում տեղ գտած այն պատկերացումներին, որոնք վերաբերում են Աքեմենյան տերության կառավարման համակարգերին:

Վաղուց է նկատվել, որ Ղարեհ I-ի որոշ երկրացուցակներում հիշատակված միավորները թվարկված են աշխարհագրական հերթականությամբ և խմբավորված ըստ աշխարհագրական տեղակայության<sup>2</sup>: Այդ խմբերի կազմի, քանակության ու տեղակայության վերաբերյալ կան տարաբեր տեսակետներ, ինչը կարծում ենք հիմնականում պետք է պայմանավորել նրանով, որ կարևորվել և անհրաժեշտ խորությամբ քննվել են ոչ բոլոր երկրացուցակները:

Մեր կարծիքով, Ղարեհի DB, DSaa, DPe, DSe, DNa տարեգրություններում տեղ գտած երկրացուցակները կազմված են միևնույն սկզբունքով: Ղրանցում հիշատակված են աշխարհագրական գոտիների բաժանված 5 երկրախմբեր, որոնք միմյանցից զատորոշված են թվարկման առանձնահատուկ, տեղորոշիչ հերթականությամբ: Սկզբում թվարկված են կենտրոնական դիրք գրավող երկրների խումբը, որից հետո, աշխարհագրական տեղակայությանը համապատասխանող հերթականությամբ՝ կենտրոնական երկրախմբի շուրջը, ավելի որոշակի՝ նրանից հյուսիս-արևելք, հարավ-արևելք, հարավ-արևմուտք և հյուսիս-արևմուտք տեղակայվող մյուս 4 երկրախմբերը: Այս կարգագծից կան որոշ շեղումներ, բայց դրանք հազվադեպ են և չեն խանգարում նկատել, որ հիշատակված միավորների մեծամասնությունը թվարկված են իրենց աշխարհագրական տեղակայությանը համապատասխանող հերթականությամբ և նույն տեղակայություն ունեցող երկրների խմբում:

Ստորև ներկայացված Ղարեհի երկրացուցակներում հիշատակված միավորները մենք համարակալել ենք բնագրերին համապատասխանող հերթականությամբ և նշել ամեն մի երկրախմբին համապատասխանող աշխարհագրական տեղակայությունը: Մենք նկատի ենք ունեցել երկրախմբերի մեկը մյուսի հանդեպ ունեցած տեղակայությունը, ինչից հետևում է դրանց մեր տված «Կենտրոն», «Հյուսիս-արևելք», «Հարավ-արևելք», «Հարավ-արևմուտք», «Հյուսիս-արևմուտք» անվանումները:

Իրենց տեղակայությանը չհամապատասխանող երկրների խմբում հիշատակված միավորները ընդգծել ենք շեղագիր:

<sup>1</sup> Ղարեհին և Արտաքսերքսես III-ին վերագրվող երկու երկրացուցակների (DNe, A<sup>3</sup>Pb // Schmitt R., "Die altpersischen Inschriften der Achämeniden"; Wiesbaden, 2009, S. 112-114, 198-199; URL: <https://archive.org/details/DieAltpersischenInschriftenDerAchämeniden>) մենք չենք անդրադառնա, քանի որ դրանք ընդհանուր առմամբ կրկնում են Ղարեհի Նաղշ-ի Ռուստամի արձանագրությունում (DNa) առկա, ստորև ներկայացված երկրացուցակը (հիշյալ ցուցակների համապատասխանությունների վերաբերյալ տե՛ս - Lecoq P., "Les inscriptions de la Perse achéménide", Paris, 1997, p. 134; URL: <http://www.elamit.net/depot/resources/lecoq1997ocr.pdf>; Schmitt R., "Beiträge zu altpersischen Inschriften"; Wiesbaden, 1999, S. 1-25; URL: <https://archive.org/details/BeitrageZuAltpersischenInschriften1999>); նույնի - 2009, նշվ. աշխ., էջ 27, 112, 198; Jacobs B., "Kontinuität oder kontinuierlicher Wandel in der achämenidischen Reichsverwaltung? Eine Synopse von PFT, dahyāva-Listen und den Satrapienlisten der Alexanderhistoriographen". In: B. Jacobs, W.F.M. Henkelman, M.W. Stolper (ed.), Die Verwaltung im Achämenidenreich – Imperiale Muster und Strukturen, Classica et Orientalia 17 (S. 3-44); Wiesbaden, 2017, S. 6): Հայտնի են նաև այլ երկրացուցակներ, որոնք տեղ են գտել Ղարեհ I-ի եգիպտական հուշակոթողների ու սեփական արձանի վրա թողած արձանագրությունում (Posener G., "La première domination perse en Égypte: recueil d'inscriptions hiéroglyphiques"; BdE 11; Le Caire, 1936, p. 53, 68-70, 181-189; URL: <https://archive.org/details/BdE11/page/n99>); Kuhrt A., "The Persian Empire: A Corpus of Sources from the Achaemenid Period"; London - New York, 2007, p. 479): Այլ սկզբունքով կազմված այդ երկրացուցակներին մենք կանդրադառնանք առաջիկա քննություններում:

<sup>2</sup> Տե՛ս Shahbazi Sh., "Darius iii. Darius I the Great," Encyclopaedia Iranica, 1994, VII/1, p. 41-50; URL: <http://www.iranicaonline.org/articles/darius-iii>; Lecoq P., նշվ. աշխ., էջ 134, Briant P., "From Cyrus to Alexander: A History of the Persian Empire". Origin. Publ. "Histoire de l'empire perse de Cyrus à Alexandre". Paris, 1996. Transl. by P. T. Daniels, Indiana Eisenbrauns; 2002, p. 180; URL: <https://archive.org/details/FromCyrusToAlexanderAHistoryOfThePersianEmpire>):

Ներկայացված երկրացուցակներում Պարսքը մյուս միավորների շարքում հիշատակված է երկու տարեգրությունում (DB, DSaa): Մյուս դեպքերում այդ միավորը թեև անմիջապես ցուցակներում չի հիշատակվում, բայց Ղարեհն այդ տարեգրությունների նախաբաններում պարտադիր հայտնում է, որ ինքը Պարսքի հետ մեկտեղ կամ Պարսքից դուրս է տիրել թվարկված երկրներին: Սրանից ելնելով և հետևելով մյուս երկու ցուցակներին, ինչպես նաև նույն ցուցակներին անդրադարձած Պ. Լեկոքի օրինակին<sup>1</sup>, հիշյալ դեպքերում մենք ներկայացված երկրացուցակներում Պարսքը նշել ենք ուղղանկյուն փակագծերի - [-] մեջ:

***Բեհիսթունի տարեգրության (DB)<sup>2</sup> երկրացուցակը:***

Ա. Կենտրոն - 1.Պարսք, 2.Էլամ,

Բ. Հարավ-արևմուտք -3.Բաբելոնիա, 4.Ասորեստան, 5.Արաբիա, 6.Եգիպտոս,

Գ. Հյուսիս-արևմուտք - 7.Ափաբնակներ<sup>3</sup>, 8.Լյուդիա, 9.Հոնիա, 10.Մարաստան, 11.Հայաստան, 12.Կապադովկիա,

Դ. Հյուսիս-արևելք - 13.Պարթիա, 14.Դրանգիանա, 15.Արիա, 16.Քորասմ, 17.-Բակտրիա, 18.Սոգդ,

Ե. Հարավ-արևելք - 19.Գանդարա, 20.Սկյութիա, 21.Սատտագիդա, 22.Արաքոսիա, 23.Մակա:

***Սուսայի արքադերեն տարեգրության (DSaa)<sup>4</sup> երկրացուցակը:***

Ա. Կենտրոն - 1.Պարսք, 2.Էլամ, 3.Մարաստան,

Բ. Հարավ-արևմուտք - 4.Բաբելոնիա, 5.Ասորեստան, 6.Արաբիա, 7.Եգիպտոս,

Գ. Հյուսիս-արևմուտք - 8.Կղզիաբնակներ<sup>5</sup>, 9.Լյուդիա, 10.Հոնիա<sup>6</sup>, 11.Հայաստան<sup>7</sup>, 12.Կապադովկիա,

Դ. Հյուսիս-արևելք - 13.Պարթիա, 14.Դրանգիանա, 15.Արիա, 16.Քորասմ, 17.-Բակտրիա, 18.Սոգդ,

Ե. Հարավ-արևելք - 19.Գանդարա, 20. Սկյութիա, 21.Սատտագիդա, 22.Արաքոսիա, 23. Մակա<sup>8</sup>:

***Պերսեպոլիսի տարեգրության (DPe)<sup>9</sup> երկրացուցակը:***

Ա. Կենտրոն - 1.[Պարսք], 2.Էլամ, 3.Մարաստան,

Բ. Հարավ-արևմուտք - 4.Բաբելոնիա, 5.Ասորեստան, 6.Արաբիա, 7.Եգիպտոս,

Գ. Հյուսիս-արևմուտք - 8.Հայաստան, 9.Կապադովկիա, 10.Լյուդիա, 11.Հոնիա<sup>10</sup>, 12.Կղզիաբնակներ<sup>1</sup>, 13.Անդրծովք<sup>2</sup>, 14.Սագարտիա<sup>3</sup>.

<sup>1</sup> Lecoq P., նշվ. աշխ., էջ 133:

<sup>2</sup> Schmitt R., The Bisitun Inscriptions of Darius the Great: Old Persian Text // Corpus Inscriptionum Iranicarum, II, Texts I; London, 1991, p. 49-50 / § 6; I.12-17;  
URL:<https://archive.org/details/Schmitt.R.TheBisitunInscriptionOfDariusTheGreatOldPersianText-1991/page/n1>:

<sup>3</sup> Էգեյան ծովի ավազանի միավորներին այս և մյուս երկրացուցակներում տրված են ոչ թե անվանումներ, այլ տեղագրական նկարագրություններ, ինչի փոխարեն մենք օգտագործել ենք դրանց հնարավորինս համապատասխանեցված անվանումներ: Այս միավորի տեղանկարագրությունը թարգմանվել է. «the people) who (dwell) by the sea / ժողովուրդներ, որոնք բնակվում են ծովի մոտ»: Այդպիսով նկատի է առնվել Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան առափնյա հատվածը, որը հույները կոչել են «Դասկիլեյոն» (Schmitt, R., 1991, նշվ. աշխ., էջ 49, ծան. 15): Բնագրում նրանց տրված է «tayai drayahyā /ափաբնակներ» բնորոշումը, որը DSe երկրացուցակում տրված է նաև Էգեյան ծովի արևելյան ավազանի հույներին: Բայց Պ. Լեկոքը կասկածում է, որ այդ բնորոշմամբ նկատի են առնված միևնույն միավորները (էջ 141):

<sup>4</sup> Lecoq P., նշվ. աշխ., էջ 245-246:

<sup>5</sup> Այս միավորի տեղանկարագրական անվան լրիվ թարգմանությունն է. «les Pays de la Mer / ծովի երկրներ», ինչով նկատի են առնված կղզիաբնակ հույները: Սրոնք նույնացվում են DPe երկրացուցակում նման բնորոշումով ներկայացող հույներին (Lecoq P., նշվ. աշխ., էջ 143):

<sup>6</sup> Պ. Լեկոքի հրատարակած երկրացուցակում (էջ 246) գրված է «la Grèce / Հունաստան», իսկ անվանացանկում (էջ 299) «lonie / Հոնիա»:

<sup>7</sup> Բնագրում - «Urartu»:

<sup>8</sup> Բնագրում - «Quadie»:

<sup>9</sup> Schmitt R. 2009, նշվ. աշխ., էջ 117-119:

<sup>10</sup> Անվան լրիվ թարգմանությունը. «die Ioner des Festlandes / մայրցամաքային հոնացիներ»:

Դ. Հյուսիս-արևելք - 15.Պարթիա, 16.Դրանգիանա, 17.Արիա, 18.Բակտրիա, 19.-Սոգդ, 20.Քորասմ,

Ե. Հարավ-արևելք - 21.Սատտագիդա, 22.Արաքոսիա, 23.Հինդ<sup>4</sup>, 24.Գանդարա, 25.Սկյութիա, 26.Մակա:

*Սուսայի տարեգրության (DSe)<sup>5</sup> երկրացուցակը:*

Ա. Կենտրոն - 1.[Պարսք], 2.Մարաստան, 3. Էլամ,

Բ. Հյուսիս-արևելք - 4. Պարթիա, 5. Արիա, 6.Բակտրիա, 7.Սոգդ, 8.Քորասմ, 9.Դրանգիանա,

Գ. Հարավ-արևելք - 10.Արաքոսիա, 11.Սատտագիդա, 12.Մակա, 13.Գանդարա, 14.Հինդ, 15.Սկյութներ-Ամ<sup>6</sup>, 16.Սկյութներ-Ց<sup>7</sup>.

Դ. Հարավ-արևմուտք - 17. Բաբելոնիա, 18.Ասորեստան, 19.Արաբիա, 20.Եգիպտոս,

Ե. Հյուսիս-արևմուտք - 21. Հայաստան, 22.Կապադովկիա, 23.Լյուդիա, 24.Հույներ-Ար<sup>8</sup>, 25. Սկյութներ-ՍԾ<sup>9</sup>, 26.Թրակիա, 27. Հույներ-Արմ<sup>10</sup>, 28.Կարիա:

Նաղշ-ի Ռուստամի տարեգրության (DNa)<sup>11</sup> Երկրացուցակը:

Ա. Կենտրոն - 1.[Պարսք], 2.Մարաստան, 3. Էլամ,

Բ. Հյուսիս-արևելք - 4.Պարթիա, 5.Արիա, 6.Բակտրիա, 7.Սոգդ, 8.Քորասմ, 9.Դրանգիանա,

Գ. Հարավ-արևելք - 10. Արաքոսիա, 11.Սատտագիդա, 12. Գանդարա, 13.Հինդ, 14.Սկյութներ-Ամ, 15.Սկյութներ-Ց,

Դ. Հարավ-արևմուտք - 16. Բաբելոնիա, 17.Ասորեստան, 18.Արաբիա, 19.Եգիպտոս,

Ե. Հյուսիս-արևմուտք - 20. Հայաստան, 21.Կապադովկիա, 22.Լյուդիա, 23.Հոնիա, 24.Սկյութներ-ՍԾ, 25.Թրակիա, 26.Հույներ-Ս<sup>12</sup>, 27. Լիբիա, 28. Նուբիա, 29. Մակա, 30. Կարիա:

<sup>1</sup> Այս միավորի տեղանկարագրական անվան լրիվ թարգմանությունն է. «(die,) die im Meer (wohnen) / նրանք, որոնք բնակվում են ծովում»: Նկատի են առնված էգեյան ծովի կղզիների հույները:

<sup>2</sup> Այս միավորի տեղանկարագրության լրիվ թարգմանությունն է. «die Länder, die jenseits des Meeres (sind) / երկրներ, որոնք ծովից այն կողմ են»: Նկատի է առնված էգեյան ծովի արևմտյան ավազանը:

<sup>3</sup> Բեհիսթունի տարեգրությունից հետևում է, որ Սագարտիան գտնվել է Արբելա քաղաքի շրջանում (Дандамаев М., “Политическая история Ахеменидской державы”, Москва, 1985, с. 91; URL: <http://lib.agu.site/books/122/324/>; Jacobs B., 2017 նշվ. աշխ., էջ 14), այսինքն Մարաստանի, Բաբելոնիայի ու Հայաստանի միջև ընկած երկրամասում: Այս երկրացուցակում Սագարտիան հիշատակված է Հյուսիսարևմուտք երկրախմբի վերջում: Նրանից հետո թվարկվում են Հյուսիսարևելք խմբի միավորները, որոնցից որևէ մեկի հետ Սագարտիան չի սահմանակցում: Այս հանգամանքից ելնելով ենթադրել ենք, որ DPe ցուցակում Սագարտիան նկատի է առնված Հյուսիսարևմուտք երկրախմբում:

<sup>4</sup> Բնագրում Hinduš, Hinduya: Նկատի է առնված Հինդոս գետի ստորին հոսանքից արևմուտք ընկած երկրամասը:

<sup>5</sup> Schmitt R., 2009, նշվ. աշխ., էջ 123-127:

<sup>6</sup> Անվան լրիվ թարգմանությունը. «die amyrgischen Saken / ամյուրգյան սակ-սկյութներ» (Միջին Ասիա), ինչից հետևում է մեր տված «Սկյութներ-Ամ/ամյուրգյան» պայմանական անվանաձևը:

<sup>7</sup> Անվան լրիվ թարգմանությունը. «die spitzmützigen Saken / ggազլխարկ սակ-սկյութներ» (Միջին Ասիա), ինչից հետևում է մեր տված «Սկյութներ-Ց/ggազլխարկ» պայմանական անվանաձևը:

<sup>8</sup> Այս միավորի տեղանկարագրական անվան լրիվ թարգմանությունն է. «die Griechen, die im/am Meer (sind) / հույներ, որոնք ծովամերձ/ծովում են»: Նկատի են առնված էգեյան ծովի արևելյան ավազանի հույները, ինչից հետևում է մեր տված «Հույներ-Ար/արևելյան» պայմանական անվանաձևը:

<sup>9</sup> Այս միավորի տեղանկարագրության լրիվ թարգմանությունն է. «die Saken jenseits des Meeres / անդրծովյան սկյութեր»: Այդպիսով նկատի են առնված Սև ծովի հյուսիս-արևմտյան ավազանի սկյութները, ինչից հետևում է մեր տված «Սկյութներ-ՍԾ/սևծովյան» պայմանական անվանաձևը:

<sup>10</sup> Այս միավորի տեղանկարագրության լրիվ թարգմանությունն է. «die Griechen jenseits des Meeres / անդրծովյան հույներ»: Նկատի են առնված էգեյան ծովի արևմտյան ավազանի հույները, ինչից հետևում է մեր տված «Հույներ-Արմ/արևմտյան» պայմանական անվանաձևը :

<sup>11</sup> Schmitt R., 2009, նշվ. աշխ., էջ 101-102:

<sup>12</sup> Այս միավորի տեղանկարագրական անվան լրիվ թարգմանությունն է. «die schildtragenden Griechen / սաղավարտակիր հույներ», ինչից հետևում է մեր տված «Հույներ-Ս/սաղավարտակիր» պայմանական անվանաձևը:

Ներկայացված բոլոր երկրացուցակներում Կենտրոնին հաջորդող 4 երկրախմբերը (դրանց, որպես Կենտրոնի որևէ կողմին հարող երկրամասեր, կանվանենք «կողմնակալություններ»<sup>1</sup>) թվարկվում են Կենտրոնի նկատմամբ ժամսլաքի շարժի ուղղությանը համապատասխանող հերթականությամբ:

Երկրացուցակները կազմողներն աշխատել են դրանցում ընդգրկված միավորները թվարկել այնպիսի հերթականությամբ, որպեսզի 5 երկրախմբերը հնարավորինս զատորոշվեն միմյանցից: Ղա ակնհայտ է նախ նրանից, որ որևէ երկրախումբը եզրափակող երկիրը հազվադեպ է սահմանակցում հաջորդ երկրախմբում առաջինը թվարկվող միավորի հետ<sup>2</sup>:

Ներկայացված երկրացուցակներում առկա է երկրախմբերի թվարկման հերթականության 2 տարբերակ: DB, Dpe և DSaa ցուցակներում, Կենտրոնից հետո թվարկումը սկսվում է Հարավ-արևմուտք խմբից և ժամսլաքի շարժով ու աշխարհագրական հերթականությամբ թվարկվում մյուս երեք երկրախմբերը: Իսկ մյուս երկու ցուցակներում Կենտրոնից հետո թվարկումը սկսվում է Հյուսիսարևելք խմբից և նույն կարգով թվարկվելով, եզրափակվում Հյուսիսարևմուտք երկրախմբով:

Երկրախմբերի թվարկման հերթականության փոփոխությունների դեպքում նրանց գրաված տեղը ցուցակներում թեև փոփոխվում է, բայց դրանցում ընդգրկված միավորների կազմը հիմնականում մնում է անփոփոխ: Սա երկրախմբերը միմյանցից զատորոշող ևս մեկ ակնհայտ մոտեցում է:

Բոլոր ցուցակներում, թվարկման հերթականությունից անկախ, անխախտ պահպանում են Հարավ-արևմուտք (Բաբելոնիա, Ասորեստան, Արաբիա, Եգիպտոս) և Հյուսիս-արևելք (Պարթիա, Ղրանգիանա, Արիա, Բակտրիա, Սոգդ, Քորասմ) երկրախմբերի կազմը: Իրենց անխախտ կազմերով այս երկրախմբերը մյուսներից առավել որոշակի զատորոշվում են որպես առանձին միավորներ:


Պարսք, Մարաստան, Էլամ միավորներից բաղկացած Կենտրոնի կազմը խախտվում է միայն DB ցուցակում, որում Մարաստանը հիշատակված է այլ խմբում: Միավորների կազմն ավելի հաճախ փոփոխվում է մյուս երկու երկրախմբերում: Բայց դրանք ունեն հաստատուն ներկա միավորներ (Հյուսիս-արևմուտք - Հայաստան, Կապադովկիա, Լյուդիա, Հոնիա կամ Հույներ-Ար: Հարավ-արևելք - Արաքոսիա, Սատտագիդա, Փանդարա, Մակա կամ Հինդ), որոնց հավելված միավորները հիմնականում նորանվաճ երկրամասեր են կամ այդ խմբերում են նշվել սխալմամբ:

Այս քննությունից կարծում ենք ակնհայտ է, որ Ղարեհի երկրացուցակները կազմված են միևնույն սկզբունքով և ունեն պարզ, «Կենտրոն + 4 կողմնակալություններ» կառուցվածքը: Այսպիսին է հավանաբար հանդիսացել Աքեմենյան տերության վարչատարածքային կառուցվածքը: Այսինքն, Աքեմենյան տերության տարածքը նույնպես բաղկացած է եղել տերության կենտրոնն ընդրկող միավորից և այն եզերող 4 տարածամասերից: «1+4» ձևատիպն ունեցող այս կառուցվածքով են հավանաբար ուղեկցվել Ղարեհի տարեգիրները երկրացուցակները կազմելիս:

<sup>1</sup> Այս և «կուսակալություն» տերմինները նույն նշանակությամբ գործածվել են դեռևս գրաբարում (Հայր Գ. Աւետիքեան, Հայր Խ. Սիւրմէլեան, Հայր Մ. Աւգերեան. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»; Վենետիկ, 1836; վերատ. Ե., 1979, էջ 1112, 1123; URL:

[http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=26&dt=HY\\_HY](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=26&dt=HY_HY)):

<sup>2</sup> Երկրացուցակներում այդպես պատահում է միայն մեկական անգամ, երբ DB, DSaa, DPe ցուցակներում Մարաստանից կամ Էլամից հետո թվարկվում է դրանց սահմանակից Բաբելոնը, և երբ DSe, DNa ցուցակներում Ղրանգիանային հաջորդում է հարևան Արաքոսիան:



Աշխարհագրական հերթականությամբ թվարկումից Դարեհի ներկայացված երկրացուցակներում առկա են ընդհանուր առմամբ 3 շեղում: Դրանցից մեկը տեսնում ենք մջինասիական սկյութների (Ամյուրգյան և Ցցազլխարկ սկյութներ կամ դրանցից որևէ մեկը) դեպքում, որոնք բոլոր ցուցակներում թվարկված են Հարավ-արևելք երկրախմբում: Սա հավանաբար Դարեհի առաջին արձանագրությունում թույլ տրված և մյուսներում կրկնված սխալմունք է, քանի որ այդ միավորների իրական տեղակայությունը Հյուսիսարևելք խմբում է: Դա քաջ հայտնի էր Համադանում և Պերսեպոլիսում հայտնաբերված Դարեհի տարեգրությունները (DHa, DPh)<sup>1</sup> կազմողներին: Նրանք Աքեմենյան տերության տարածքը պատկերացրել են հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք և հարավ արևելքից հյուսիս-արևմուտք ձգվող խաչվող առանցքների ընդգրկած սահմաններով, որի հյուսիս-արևելյան եզրը տեղադրում են Սոգդին հարող Սկյութիայում, իսկ հարավ-արևելյան ծայրը՝ Հինդուս: Բայց թե ինչու են Դարեհի երկրացուցակները կազմողները միջինասիական Սկյութիաները միահամուռ պատկերացրել ոչ թե Սոգդի այլ Հինդի ու Հարավ-արևելք խմբի մյուս միավորների հետ, սխալմունքից բացի այլ գործոնով դժվար է պայմանավորել: Կամ գուցե այս հարցում մենք գործ ունենք բոլորովին այլ գործոնների հետ, ինչը մենք չենք կարող պատկերացնել տվյալների տղության կամ բացակայության պատճառով: Դա կարող էր պայմանավորված լիներ սկյութների քոչվորական կենցաղով, նրանց մշտական ու ժամանակավոր բնակության վայրերի տեղակայությամբ<sup>2</sup>:

Դարեհի երկրացուցակներից ամենաանհամատեղելի շեղումներն ունի DNa տարեգրության ցուցակը: Այս տարեգրությունը դրվել է Դարեհի դամբարանում, ինչը ենթադրում է, որ այն եղել է Աքեմենյան արքայի վերջին պատգամը, որը գուցե վերջնական տեսքի է բերվել նրա մահվանից հետո: Դրա երկրացուցակում միավորները թվարկված են աշխարհագրական գրեթե այն նույն կարգով, ինչպես որ մյուս ցուցակներում: Բայց ցուցակի վերջում այդ կարգը կոպտորեն խախտված է: Հյուսիսարևմուտք խմբում են թվարկված այդ տարածաշրջանից լրիվ կտրված Լիբիան, Նուբիան և Մական: Աշխարհագրական կարգագծից այսպիսի անհամատեղելի շեղում չենք տեսնում Դարեհի մյուս ցուցակներում: Սա չի կարելի համեմատել միջինասիական սկյութներին սխալ տեղակայելու օրինակների հետ, քանի որ այդ դեպքերում շփոթված են հարակից

<sup>1</sup> Schmitt R., 2009, նշվ. աշխ., էջ 98-99, 119-120:

<sup>2</sup> Կոտեսիասից հայտնի պատկերացումներում սկյութների և նրանց նույնացվող դերբիկների բնակության շրջանները ընդգրկում են ոչ միայն Միջին Ասիայի հյուսիսը, այլև հարավ-արևելյան, մինչև Հինդ հասնող երկրամասերը (տես - Gardiner-Garden J., "Ktesias on Early Central Asian History and Ethnography"; In: Indiana University, Research Institute for Inner Asian Studies, 6; Bloomington; 1987, p. 17-18, 25-31): Իսկ սա այն երկրամասն է, որտեղ Դարեհի բոլոր երկրացուցակներում տեղակայվում են Սկյութիաները: Այս հանգամանքը կարող է որոշ խմբագրումներ առաջադրել ասիական սկյութների բնակության ողջ սահմանների և դրա այն հատվածների վերաբերյալ, որոնք ընդգրկվել են Աքեմենյան տերության մեջ:

երկրամասեր: Բայց տվյալ դեպքում այլ աշխարհամասում՝ Աֆրիկայում գտնվող կամ Արաբական թերակղզուն հարող երկրամասերը հիշատակված են փոքրասիական երկրների խմբում:

Այս ակնհայտ շեղումը կարելի է պայմանավորված է նրանով, որ DNa երկրացուցակը կազմվել է ոչ թե ներկայացված կանոններով, այլ ուղղակի արտագրվել է Դարեհի մյուս ցուցակներից որևէ մեկից, հնարավոր է դրա հետ նմանություններ ունեցող DSe ցուցակից<sup>1</sup>, որի վերջում, արդեն առանց աշխարհագրական կարգը պահպանելու, հավելվել են հիշյալ 3 միավորները: Սա կարող է նշանակել, որ այս տարեգրությունը կազմելիս այլևս չկային Դարեհի նախորդ տարեգրությունների հեղինակները կամ հեղինակը, որոնց կազմած ցուցակներում այսպիսի կոպիտ շեղումները բացակայում են:

Վերջին շեղումը վերաբերում է Մարաստանին, որը Դարեհի առաջին տարեգրության (DB) երկրացուցակում հիշատակված է իր տեղակայությանն ու կարգավիճակին չհամապատասխանող տեղում՝ Հյուսիսարևմուտք խմբում: Եթե խոսքը վերաբերելու է ռավոր կամ նորանվաճ, դեռևս ոչ այնքան հայտնի երկրամասի, կարելի էր ենթադրել, որ մենք գործ ունենք սխալմունքի կամ շփոթի հետ: Բայց դժվար է պատկերացնել, որ տարեգիրները սխալվել են Պարսքից հետո Աքեմենյան տերության ամենաառաջնային ու հայտնի միավորի տեղակայության հարցում: Այս հանգամանքը մեզ պարտադրում է տվյալ հարցի համար փնտրել այլ պատասխան:

Հնարավոր է, որ DB երկրացուցակում նկատի է առնված Փոքր Մարաստանը, որի առկայությունը ենթադրվում է դեռևս քթեմենյան ժամանակներում<sup>2</sup>: Այսպես ենթադրելու հիմք է տալիս նաև Բեհիսթունի տարեգրությունը, որում երկրների թվարկման հապավված տարբերակում («Պարսքը, Մարաստանը և մյուս երկրները»)՝<sup>3</sup>, Մարաստանը հիշատակված է Պարսքի հետ, որը Դարեհի բոլոր երկրացուցակներում տեղակայված է Կենտրոնում: DB տարեգրությունում 4 անգամ հանդիպող երկրների թվարկման այս հապավված տարբերակում հավանաբար նկատի է առնված արդեն Մեծ Մարաստանը: Փաստորեն, այդ տարեգրությունում հիշատակված են տարբեր տեղակայություն ունեցող 2 Մարաստան, որոնցից մեկը նշված է Հյուսիսարևմուտք երկրախմբում, իսկ մյուսը՝ Կենտրոնում, Պարսքի հետ<sup>4</sup>: Նույն ենթադրությանն են հանգեցնում նաև այլ տվյալներ, որոնց հանգամանակից հնարավոր է անդրադառնալ առանձին քննությամբ:

Դարեհի երկրացուցակները կազմելու աշխարհագրական սկզբունքը միանգամայն ակնհայտ է և, ինչպես ասվեց, վաղուց է նկատվել այդ թեմային անդրադարձած հետազոտողների կողմից: Դրանցով ուղեկցվելով, Շ. Շահբազին կարծում է, որ Աքեմենյան տերությունը բաղկացած է եղել 7 հիմնատարածքներից, որոնցում ընդգրկվել են երկրացուցակներում նշված միավորները<sup>5</sup>: Նույն ցուցակների վերաբերյալ Պ. Բրայանթը

<sup>1</sup> Այդ ցուցակների նմանության մասին տե՛ս - Lecoq P., նշվ. աշխ., էջ 134:

<sup>2</sup> Briant P., նշվ. աշխ., էջ 738:

<sup>3</sup> Schmitt R., 1991, նշվ. աշխ., էջ 51,52,53 (I.26-48, 61-71):

<sup>4</sup> Տարբեր տեղակայություն ունեցող Մարաստանների գոյության մասին վկայում են հունա-հռոմական աղբյուրները, բայց այդ տեղեկությունները վերաբերում են Ետաքեմենյան ժամանակներին: Այդ միավորներից մեկը կոչվում է «Մեծ Մարաստան», Էկբատան մայրաքաղաքով: Մյուս նույնանուն միավորը տեղակայվում է Մեծ Մարաստանից հյուսիս-արևմուտք, Ուրմիա լճից Կասպից ծով ընկած շրջանում և հայտնի է «Փոքր Մարաստան» կամ «Ատրոպատյան Մարաստան» անվանատարբերակներով («Justini Historiae Philippicae», XIII.4(13-14);. Leipzig, 1831; URL:

<https://archive.org/details/historiaephilipp00just/page/n6>; “The Geography of Strabo”, XI,13(1-2); transl. George Bell & Sons; London, 1903; URL: <http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=Perseus%3Atext%3A1999.01.0239%3Abook%3Dnotice>):

<sup>5</sup> Շ. Շահբազին (տես - նշվ. աշխ.) որպես հիմք ընդունելով DNa երկրացուցակը և ուղեկցվելով պարսից ավանդություններում ու հին հունական պատմագրությունում տեղ գտած այն պատկերացումներով, որ Աքեմենյան տերությունը Դարեհի ու նրա համախոհների քանակով բաժանվել է 7 մասի, նույն քանակի միավորներ է նա փորձում տեսնել Դարեհի հիշյալ երկրացուցակում: Շահբազիի նկատի առած 7 մասերից չորսը (3-6 երկրախմբեր) համապատասխանում են մեր նշած 4 կողմնակալություններին: Պարսքը, Մարաստանը և Էլամը, որոնք մեր կարծիքով կազմել են կենտրոնական դիրք գրավող մեկ երկրախումբ, նա բաժանել է 2 մասի: Իսկ Լիբիայի, Եթովպիայի, Կարիայի (Պարսից ծոց) և Մակայի միավորմամբ նա ստացել է աշխարհագրորեն միմյանցից կտրված հատվածներից կազմված 7-րդ երկրախումբը:

կարծում է, որ դրանցում նշված միավորները հստակ թվարկված են աշխարհագրական սկզբունքով և բաժանված 5 խմբերի<sup>1</sup>: Բայց դա նա համարում է Աքեմենյան տերության վարչատարածքային կառուցվածքի վերաբերյալ ոչ թե իրական այլ երևակայական պատկերացման արտահայտություն, որը թելադրվել է Ավեստայում արտահայտված դիցական պատկերացումներով:

Նախորդ քննությունից կարծում ենք ակնհայտ է, որ Դարեհի տարեգիրները բավականին լավ են պատկերացրել Հիմալայներից ու Հինդուսից Եվրոպա ու Աֆրիկա ձգվող ծավալուն տարածաշրջանի աշխարհագրությունը: Դրա հաստատումը նրանց կազմած երկրացուցակներն են, որոնցում աշխարհագրական շեղումները գրավում են ոչ նշանակալի տեղ: Որպես կողմնորոշման առանցք ընդունելով Աքեմենյան տերության կենտրոնական շրջանը, նրանք կարողացել են աշխարհագրական մեծ ճշգրտությամբ տեղորոշել այդ տերության մոտ 30 երկրամասերը: Աքեմենյան տերության ընդգրկած տարածքի վերաբերյալ այս կարգի աշխարհագրական պատկերացումներ բացակայում են Ավեստայում, առավել ևս հին հունական խիստ աղավաղված աշխարհագրական պատկերացումներում: Նույնիսկ ավելի ուշ ժամանակներում, Ալեքսանդր Մակեդոնացու կողմից այդ տերության նվաճվելուց հետո, հունա-հռոմեական աղբյուրներում հիշյալ տարածաշրջանի հատկապես արևելյան կեսի վերաբերյալ դեռևս տեսնում ենք շատ աղավաղված աշխարհագրական պատկերացումներ:

Դարեհի երկրացուցակներում աշխարհագրական բավականին լավ իմացության առկայությունը կարծում ենք մերժում է դրանք անիրատեսական համարող տեսակետները<sup>2</sup> և առաջադրում այդ երկրացուցակները դիտել որպես Աքեմենյան տերության վարչատարածքային կառուցվածքը ներկայացնող թերևս լավագույն վավերագրերի:

Ակնհայտ է, որ Դարեհի երկրացուցակների մեր քննությունը համաձայնում է Պ. Բրայանթի տեսակետի հետ, ըստ որի՝ այդ ցուցակներում Աքեմենյան տերությունը բաժանված է 5 մասի: Տարբերությունը միայն այն է, որ մեր կարծիքով դա հանդիսացել է ոչ թե դիցական պատկերացումների, այլ իրական իրավիճակի արտահայտություն: Այդ 5 ծավալուն տարածքային միավորներում խմբավորված են 23 - 30 տարածքային ավել փոքր միավորներ, որոնք հին պարսկերեն տեքստերում կոչվում են dahyu- «երկիր, երկրամաս, նահանգ, սատրապություն»: Դահյուների մեջ ընդգրկված առավել փոքր ու ցածր կարգավիճակ ունեցող տարածքային միավորները Դարեհի երկրացուցակներում հավանաբար տեղ չեն գտել: Դրանց վերաբերյալ որոշ պատկերացում կարող են տալ Բեհիսթունի արձանագրությունը և դրա հետ գրված մեկ այլ կարճ սեպագիր (DBj): Դրանցում ապստամբած երկրների շարքում հիշատակված են Հյուրկանիան ու Մար-

<sup>1</sup> Briant P., նշվ. աշխ., էջ 180: Պ. Բրայանթն այդ ենթախմբերը պատկերացնում է կենտրոնի և նրանից դեպի Տերության ծայրերը ձգվող 4 կիսաշրջանաձև առանցքների տեսքով, որոնք ունեն հետևյալ ընդգրկումը.

«Ա. Կայսրության կենտրոն (Պարսք, Էլամ)

Բ. Հարավ-Հարավարևելյան առանցք (Բաբելոնիա, Ասորեստան, Արաբիա, Եգիպտոս)

Գ. Արևմուտք-Արևելք առանցք (Որոնք ծովում են/Those of the Sea, Սարդես, Հոնիա, Մարաստան, Հայաստան, Կապադովկիա)

Դ. Կենտրոն-Արևելք առանցք (Պարթիա, Դրանգիանա, Արիա, Քորասմ, Բակտրիա, Սոգդ)

Ե. Հարավ-արևելք-Արևմուտք առանցք (Գանդարա, Սկյութիա, Սատտագիդա, Արաքոսիա, Մակա)»:

Պ. Բրայանթի առանձնացրած այս առանցք-երկրախմբերը գրեթե ամբողջությամբ համապատասխանում են մեր նշած 5 երկրախմբերին: Տարբերությունը միայն այն է, որ ուղեկցվելով DB երկրացուցակով, նա Մարաստանը տեղակայել է ոչ թե կենտրոնում, ինչպես է մյուս 4 ցուցակներում, այլ Արևմուտք-Արևելք առանցքում:

<sup>2</sup> Briant P., նշվ. աշխ., էջ 172-180; Wiesehöfer J., “Ancient Persia; from 550 bc to 650 AD”. Transl. A. Azodi; London - New York, 1996/2001, p. 60; URL:

<https://archive.org/details/AncientPersiaFrom550BcTo650Ad2001/page/n6>; Tuplin C., “The Administration of the Achaemenid Empire”; In: Coinage and Administration in the Athenian and Persian Empires, ed. by I. Carradice, 109–66. BAR 343; Oxford, 1987, p. 113; URL:

[https://www.academia.edu/4251207/The\\_administration\\_of\\_the\\_Achaemenid\\_Empire](https://www.academia.edu/4251207/The_administration_of_the_Achaemenid_Empire); նույնի՝ “War and peace in Achaemenid imperial ideology”; In: F. Muccioli et al. (edd.), Looking East. Iranian History and Culture under Western Eyes = ELECTRUM 2017, V. 24 (p. 31-54) p. 45; URL:

<http://www.ejournals.eu/electrum/2017/Volume-24/art/10677>:



գիանան<sup>1</sup>, որոնց չենք տեսնում աքեմենյան ոչ մի երկրացուցակում: Բայց DB տարեգրության հաղորդումները ենթադրում են, որ Հյուրկանիան պետք է դիտել Պարթիայի, իսկ Մարգիանան Բակտրիայի կազմում<sup>2</sup>:

Աքեմենյան տերության մեջ ընդգրկված տարածքային միավորների քաղաքական կարգավիճակի վերաբերյալ կարող են որոշ պատկերացում տալ և ուղեցույց հանդիսանալ այդ տերության կառավարման կառույցների վերաբերյալ Հերոդոտոսի սահմանումները: Դրանցից մեկում հույն պատմիչը հաղորդում է հետևյալը.

«Մեդական տիրապետության ժամանակ ևս մեկ ազգ իշխում էր մյուսին, իսկ մեղացիները՝ բոլորին, նաև իրենց մերձավոր հարևաններին, սրանք՝ իրենց հարևաններին, սրանք էլ իրենց հարևաններին և այլն: Նույն կարգով էլ այժմ պարսիկներն են հարգում. քանզի սրանք ևս նույն ձևով են իշխում և կառավարում»<sup>3</sup>:

Այս սահմանամբ ուղղորդվելով կարելի է ենթադրել, որ պարսիկների ընդհանուր ենթակայության ներքո որոշ ազգություններ ունեցել են տեղական գերիշխանություն, որի ներքո համախմբել են իրենց հարևան ազգերին և կազմել այն տարածքային միավորները, որոնք Դարեհի երկրացուցակներում կոչվում են «դահյու»: Դրանք կարող էին կոչվել այդ միավորները գլխավորող էթնոմիավորների անուններով, ինչով կարելի է պայմանավորել այն, որ դահյուներն ի տարբերություն Հերոդոտոսի համարակալված սատրապությունների, երկրացուցակներում կրում են էթնիկ անվանումներ<sup>4</sup>:

Հերոդոտոսի նույն սահմանումից հետևում է նաև այն ենթադրությունը, որ դահյուների ներտարածքային կառուցվածքը թելադրվել է դրանցում ընդգրկված էթնիկ միավորների գրաված սահմաններով: Այդ ազգատարածքները հավանաբար հանդիսացել են այն տարածքային միավորները, որոնցով կազմվել են դահյուները, իսկ սրանցով՝ 5 գլխավոր և ամենամեծածավալ տարածքային միավորները՝ Կենտրոնը և 4 կողմնակալությունները:



<sup>1</sup> Schmitt R., 1991, նշվ. աշխ., էջ 56 (DB, §21 / II.5-8); էջ 62 (DB, §35 / II.92-98); էջ 63 (DB, §38 / III.10-19); էջ 68 (DB, §52 / IV.2-31), էջ 80 (DBj):

<sup>2</sup> Дандамаев М., նշվ. աշխ., էջ 29; Lecoq P., նշվ. աշխ., էջ 202; Jacobs B., 2017, նշվ. աշխ., էջ 9, 10:

<sup>3</sup> Herodotus, I, 134 (Herodotus. Histories; Greek and English on opposite pages; transl. Ed. A.D. Godley. London, New - York. 1921-24; URL:

<http://catalog.perseus.org/catalog/urn:cts:greekLit:tlg0016.tlg001.perseus-grc1>:

<sup>4</sup> Որոշ հետազոտողներ ելնելով նրանից, որ դահյուները կրում են էթնիկ անվանումներ, աքեմենյան երկրացուցակները համարում են ոչ թե վարչական իրավիճակի, այլ լավագույն դեպքում միայն քաղաքական նպատակադրումների արտահայտություն: Սա անընդունելի են համարում այլ հետազոտողներ, որոնք պատմագիտական կարևորությամբ գերապատվությունը տալիս են աքեմենյան սկզբնաղբյուրներին (տե՛ս Jacobs B., "Die altpersischen Länder-Listen und Herodots sogenannte Satrapienliste" (Historien III, 89-94); in: Dittmann R., Eder Ch., Jacobs B. (Hg.), Altertumswissenschaften im Dialog - Festschrift für Wolfram Nagel zur Vollendung seines 80. Lebensjahres (AOAT 306, S. 301-343); Münster 2003, S. 301-306; URL: <https://unibas.academia.edu/BrunoJacobs>):

Դարեհի երկրացուցակների սույն քննությունից կարծում ենք ակնհայտ է, որ դրանք մանրակրկիտ մշակվել ու հնարամտորեն կանոնակարգվել են: Երկրացուցակները կազմած արքեմենյան տարեգիրներն աշխատել են դրանք հնարավորինս համապատասխանեցնել Աքեմենյան տերության վարչատարածքային կառուցվածքին: Նույն հնարամիտ մոտեցումն ենք տեսնում նաև Դարեհի եգիպտական երկրացուցակների դեպքում, որոնք, կարծում ենք, որ կազմվել են Աքեմենյան տերության կառուցվածքային այլ բնագավառի վերաբերով ձևատիպերով (դրանց կանդրադառնանք առաջիկա քննություններում): Դարեհի տարեգիրների հետապնդած նպատակը կարծում ենք իրականացել է և նրանք կարողացել են մեզ փոխանցել պատմագիտական մեծարժեք հաղորդագրություն, ինչի շնորհիվ կարող ենք հավելյալ ու առավել խորը պատկերացումներ կազմել Աքեմենյան տերության կառուցվածքի, կառավարման կարգերի, քաղաքական, ռազմական, հասարակական և այլ կառույցների, նույնիսկ պատմական իրադարձությունների զարգացման տրամաբանության և շատ այլ հարցերի վերաբերյալ: Կարծում ենք, որ հանձինս Դարեհի տարեգիրների կազմած երկրացուցակների, մենք ունենք Աքեմենյան տերության կառուցվածքները բացահայտող այնպիսի «կախարդական բանալի», ինչպիսի նշանակությամբ որոշ հետազոտողներ փորձել ու փորձում են օգտագործել Հերոդոտոսի սատրապական ցուցակը<sup>1</sup>:

Դարեհին հաջորդած արքաների մեզ հասած տարեգրություններից հայտնի են ևս երկու երկրացուցակ: Բայց դրանցից Արտաքսերքսես III-ին (Ք. ա. 358-338) վերագրվող ցուցակը (A<sup>3</sup>Pb) ընդօրինակված է Դարեհի DNa կամ DNe երկրացուցակից<sup>2</sup>: Իսկ որպես ինքնուրույն, համարվում է միայն Քսերքսես I-ի «Դայվա» անվամբ հայտնի տարեգրության (XPh) երկրացուցակը<sup>3</sup>: Այս ցուցակում պահպանվել է Դարեհի կանոնակարգված երկրացուցակների միայն հեռավոր արձագանքը: Այն նույնպես սկսվում է կենտրոնի երկրների թվարկմամբ, բայց շարունակությունը կամայական է ու ցաքուցրիվ: Կենտրոնին հաջորդում է նրանից կտրված, հարավ-արևելյան ծայրի Արաքոսիան, սրան՝ հյուսիս-արևմտյան թևի Հայաստանը և այսպես խառնիխուռը, մեկը մյուսի հետևից թվարկվող, բայց Տերության տարբեր ծայրերում գտնվող Խորասմիայի ու Բաբելոնիայի, Ասորեստանի ու Սատտագիդայի, Արաբիայի ու Գանդարայի և նման այլ դեպքերում: Եթե նույնիսկ թվարկվում են սահմանակից մի քանի երկրներից կազմված երկրախմբեր, ապա առանց աշխարհագրական որևէ տեղորոշիչ հերթականության<sup>4</sup>: Այս ցուցակը կարող է որոշ պատկերացումներ տալ Քսերքսեսի տերության սահմանների և դրանում ընդգրկված դահյունների վերաբերյալ, բայց այն, ի տարբերություն Դարեհի երկրացուցակների, կարծում ենք, որ վարչատարածքային կառուցվածքի այլ կարևոր մանրամասներ չի պարունակում: Նախորդ քննությամբ մենք հանգեցինք այն հետևությանը, որ Աքեմենյան երկրացուցակներից պատմագիտական առավել բարձր արժեք ունեն Դարեհ I-ի ավանդած երկրացուցակները, որոնց հետ համադրելով, փորձենք վերլուծել հին հունական և ավելի ուշ շրջանի աղբյուրներից հայտնի, Աքեմենյան տերությանը վերաբերող երկրացուցակներն ու զորացուցակները: Նախ անդրադառնանք Հերոդոտոսի Պատմությունում տեղ գտած ցուցակներին: Հույն պատմիչի Սատրապական ցուցակը (III, 89-96) սկսվում է Փոքր Ասիայում տեղակայվող I-IV սատրապություններում ընդգրկված երկրների թվարկմամբ: Այնուհետև թվարկվում են այս երկրախմբին հարավից սահմանակից, Սիրիայից Լիբիա ձգվող, V-VI սատրապություններում ընդգրկված միավորները:

<sup>1</sup> St' u Jacobs B., Henkelman W.F.M., Stolper M.W. (ed.), Die Verwaltung im Achämenidenreich – Imperiale Muster und Strukturen; Einleitung; Classica et Orientalia 17 (S. XII- XXXIII); Wiesbaden, 2017, S. XII/XIII; URL: <https://www.isdistribution.com/DocumentRender.aspx?ald=84422&asId=1>:

<sup>2</sup> St' u ծան. 2:

<sup>3</sup> Schmitt R., 2009, նշվ. աշխ., էջ 164-168; Jacobs B., 2003, նշվ. աշխ., էջ 329:

<sup>4</sup> Ինչպես DNa երկրացուցակի շեղումներին անդրադառնալիս ենթադրեցինք, Քսերքսեսի տարեգրության քննությամբ առավել ևս համոզվում ենք, որ հնարամտորեն կազմված ու կանոնակարգված Դարեհի երկրացուցակների հեղինակների իմացությունը չի փոխանցվել նրանց հաջորդած տարեգիրներին:

Հին հույներին քաջածանոթ այս առափնյա երկրամասերից հետո, Հերոդոտոսի թվարկած մյուս երկրներն ու երկրախմբերը մեծամասամբ գտնվում են Տերոթյան հակադարձ, միմյանց հետ սահմաններ չունեցող կողմերում: Իսկ սահմանակցության դեպքում դրանք թվարկված են խառնիխուռն, առանց աշխարհագրական որևէ տեղորոշիչ հերթականության: Սրանից հետևում է, որ Հերոդոտոսի սատրապական ցուցակը Դարեհի հստակ կանոնակարգված երկրացուցակների հետ որևէ էական ընդհանրություն չունի: Այն բավականին մանրամասն տվյալներ է պարունակում Աքեմենյան տերության էթնիկ կազմի վերաբերյալ, բայց վարչատարածքային կառուցվածքի հարցում, կարծում ենք, որ Հերոդոտոսի սատրապական ցուցակը չի կարող վստահելի ուղեցույց հանդիսանալ<sup>1</sup>:

Նույնը չի կարելի է ասել հույն պատմիչի զորացուցակի<sup>2</sup> վերաբերյալ, որում ներկայացված է Հունաստանի դեմ պատերազմի դուրս բերված Աքեմենյան բանակի կազմը<sup>3</sup>: Քանի որ այն կազմված է էթնիկ զորամասերով, Հերոդոտոսի զորացուցակը կարելի է համարել նաև Աքեմենյան տերության էթնիկ ցուցակը:

Հույն պատմիչի զորացուցակի քննությունից հետևում է, որ Աքեմենյան բանակի ցամաքային հետևակի կազմում ընդգրկված էթնիկ զորամասերը թվարկված են դրանք ներկայացնող ժողովուրդների աշխարհագրական տեղակայությանը մեծամասամբ համապատասխան հերթականությամբ: Այս առումով Հերոդոտոսի զորացուցակը համապատասխանում է Դարեհի երկրացուցակներին, որոնցում աշխարհագրական նույն հերթականությամբ թվարկված են նույն էթնիկ միավորների գրաված տարածքներով կազմված դահյուները: Նույնն են հաստատում այդ ցուցակների միջև առկա հետևյալ համապատասխանությունները:

Հերոդոտոսի զորացուցակը սկսվում է կենտրոնական շրջաններում բնակվող այն նույն ազգերի (պարսիկներ, մարեր, կիսիացիք [=էլամցիներ]) զորամիավորների թվարկմամբ, որոնց ներկայացնող դահյուներով (Պարսք, Մարաստան, էլամ) սկսվում են Դարեհի երկրացուցակները: Այնուհետև, ինչպես Դարեհի DSe և DNa ցուցակներում, թվարկվում են Կենտրոնից հյուսիս-արևելք, հարավ-արևելք, հարավ-արևմուտք և հյուսիս-արևմուտք բնակվող ազգախմբերի զորամիավորները: Այս դեպքում նույնպես, ինչպես Դարեհի երկրացուցակներում, էթնիկ զորամիավորներից կազմված այս 4 խմբերը թվարկվում են Կենտրոնի նկատմամբ ժամսլաքի շարժին համապատասխանող հերթականությամբ:

Նշված առանձնահատուկ համապատասխանությունները ենթադրում են, որ Հերոդոտոսի զորացուցակի համար որպես հիմք է հանդիսացել աքեմենյան ինչ որ զորացուցակ, որը կազմվել է Դարեհի երկրացուցակների կանոնակարգով<sup>4</sup>:

Ստորև ներկայացված Հերոդոտոսի զորացուցակում հիշատակված միավորները Դարեհի երկրացուցակների օրինակով համարակալել ենք բնագրային հերթականությամբ և նշել թվարկված միավորների ամեն մի խմբին համապատասխանող աշխարհագրական տեղակայությունը: Իսկ ոչ իրենց տարածաշրջանում հայտնված միավորներն ընդգծել ենք շեղագիր:

#### ***Հերոդոտոսի զորացուցակը<sup>5</sup>:***

<sup>1</sup> Հերոդոտոսի սատրապական ցուցակում տեղ գտած ակնհայտ շեղումները մեր կարծիքով Սև ծովից ու Միջագետքից արևելք ընկած Ասիայի վերաբերյալ հին հույների ունեցած աշխարհագրական խիստ աղավաղված պատկերացումների արգասիք են:

<sup>2</sup> Herodotus, VII, 61-81:

<sup>3</sup> Որոշ հետազոտողներ գտնում են, որ Քսերքսես I-ի երկրացուցակն ու Հերոդոտոսի Սատրապական ցուցակը ներկայացնում են աքեմենյան վարչական ու ռազմական կառուցվածքի առավել իրատեսական պատկերը, քան Դարեհի երկրացուցակներն ու Հերոդոտոսի զորացուցակը (Wiesehöfer J., նշվ. աշխ., էջ 60; Tuplin C., 1987, նշվ. աշխ., էջ 113; նույնի 2017, նշվ. աշխ., էջ 45):

<sup>4</sup> Պ. Լեկոքը փորձում է ինչ որ, թեկուզ տրամաբանության ընդհանրություններ գտնել Հերոդոտոս զորացուցակի և Քսերքսես I-ի XPh երկրացուցակի միջև (տես - նշվ. աշխ., էջ 135, 136):

<sup>5</sup> Herodotus, VII, 61-81: Չորացուցակում թվարկված միավորների մեծամասնության տեղակայությունը հայտնի է: Որոշ միավորների վերագրված է ենթադրական տեղակայություն, քանի որ այլ աղբյուրներում չեն հիշատակվում: Դրանցից ուտիները տեղակայվում են Կարմանիայում (Yautiyā), իսկ դադիկները,

Ա. Կենտրոն. - 1. պարսիկներ, 2. մարեր, 3. կիսիացիք (=էլամցիներ),  
 Բ. Հյուսիս-արևելք. - 4. հյուրկաններ, 5. ասորեստանցիք, 6. խալդեր, 7. բակտրիացիք, 8. սկյութներ-Ամ, 9. հինդեր<sup>1</sup>, 10. եթովպացիք-Ար<sup>2</sup>, 11. արիաներ, 12. պարթևներ, 13. քորասաններ, 14. սոգդեր,  
 Գ. Հարավ-արևելք. - 15. գանդարներ, 16. դադիկներ, 17. կասպեր, 18. սարանգներ, 19. պակտյուացիք, 20. ուտիներ, 21. միկեր, 22. պարիկանիներ,  
 Դ. Հարավ-արևմուտք. - 23. արաբներ, 24. եթովպացիք, 25. լիբիացիք,  
 Ե. Հյուսիս-արևմուտք. - 26. պափլագոնցիք, 27. լիգիացիք, 28. մատիեններ, 29. մարիանդիներ, 30. կապադովկիացիք<sup>3</sup>, 31. փոյուզներ, 32. հայեր, 33. լյուդիացիք, 34. մյուսիացիք, 35. բիթյուններ, 36. [պիսիդիացիք]<sup>4</sup>, 37. կաբելներ, 38. միլիացիք, 39. մոսքեր, 40. տիբարեններ, 41. մակրոններ, 42. մոսսինոյկք, 43. մարեններ<sup>5</sup>, 44. կոլխեր, 45. ալարոդներ, 46. սասպեյրներ, 47. Կարմիր ծովի կղզիներ<sup>6</sup>:

Հերոդոտոսի զորացուցակում առկա են Դարեհի երկրացուցակների համեմատ մի փոքր ավելի շատ շեղումներ, բայց այս դեպքում նույնպես դրանք այնքան չեն, որպեսզի խանգարեն նկատել, որ Ջորացուցակում հիշատակված էթնիկ միավորները հիմնականում թվարկված են աշխարհագրական հերթականությամբ: Դրանք ոչ միշտ են սահմանակից, բայց գտնվում են աշխարհագրական նույն տեղակայությունն ունեցող ազգերի խմբում:

Հիմնական շփոթը տեսնում ենք սահմանակցող կողմնակալություններում: Կասպերն ու սարանգները (Դրանգիանա) թվարկված են իրենց իրական տեղակայությանը հարակից Հարավ-արևելք խմբում, իսկ այդ կողմնակալությունում տեղակայվող հինդերն ու արևելյան եթովպիացիները՝ ընդհակառակը, թվարկված են Հյուսիսարևելք խմբում: Սա, ինչպես Հերոդոտոսի սատրապական ցուցակին անդրադառնալիս ենթադրեցինք, կարելի է համարել այդ հեռավոր երկրամասերի վերաբերյալ հին հույների ունեցած աղավաղված պատկերացումների արգասիք: Նույնը կարելի է ասել հավանաբար հույներին շատ ավելի անծանոթ ուտիների ու Կարմիր ծովի կղզիաբնակների տեղակայությունը շփոթելու դեպքերում:

Բոլորովին այլ հիմնավորում պետք է փնտրել ասորեստանցիներին ու խալդերին իրենց տեղակայությանը բոլորովին չհամապատասխանող տեղում՝ հյուրկանացիների

պակտյուացիք, միկերը և պարիկանիները տեղակայվում են Կարմանիայից Հինդ ու Գանդարա ընկած երկրամասերում, այսինքն մեր նկատի առած Հարավ-արևելք կողմնակալությունում:  
 Հերոդոտոսի զինական ու սատրապական ցուցակներում հիշատակված էթնիկ միավորների տեղակայության վերաբերյալ տե՛ս Laird G., "The Persian Army and Tribute Lists in Herodotus"; Classical Philology, Vol. 16, No. 4, p. 305-326; The University of Chicago, 1921; URL:

<https://www.jstor.org/stable/262900>; R. Frye. "The Heritage of Persia", London, 1962, p.42-51; URL: <https://archive.org/details/in.gov.ignca.18587/page/n5>; Lecoq P., նշվ. աշխ., էջ 130-153; Brunner J., "Peoples of Iran / Pre-Islamic Period"; Encyclopaedia Iranica, 2004, Vol. XIII, Fasc. 3, p. 326-336 and Vol. XIII, Fasc. 4, pp. 337-344; URL: <http://www.iranicaonline.org/articles/iran-v2-peoples-pre-islamic>:

<sup>1</sup> Բնագրում 'Ινδοί: Տեղակայությունը համապատասխանում է Դարեհի երկրացուցակների Հինդ երկրամասին, տե՛ս ծան. 17:

<sup>2</sup> Անվան լրիվ թարգմանությունը «Ethiopians of the east / արևելյան եթովպացիներ», ինչից հետևում է մեր տված «եթովպացիներ-Ար/արևելյան» պայմանական անվանումը: Հինդերին արևմուտքից հարևան այս եթովպիացիները Հերոդոտոսը թվարկում է ոչ թե հինդերի հետ, այլ աֆրիկյան եթովպիացիներին անդրադառնալուց հետո: Դա նա անում է նույնանուն բայց տարբեր մայրցամաքներում բնակվող այս ազգերին միմյանց համեմատելու համար: Դրանից հետո հույն պատմիչը նշում է, որ ասիական եթովպացիները զինված էին հինդերի պես և կցված նրանց, ինչից ելնելով՝ այս եթովպացիներին նշել ենք հինդերից հետո:

<sup>3</sup> Հերոդոտոսը սրանց համարում է սիրիացի, նշելով, որ դրանց պարսիկները կոչում են «կապադովկիացի» (VII, 72):

<sup>4</sup> Բացթողնված անվան վերակազմություն:

<sup>5</sup> Բնագրում Μάρεις: Հայերեն թարգմանվել է «մարեր» (Հերոդոտոս, Պատմություն, թարգմ. Ս. Կրկյաշարյան, Ե., 1986, էջ 411): Մենք նախընտրել ենք «մարեններ» պայմանական անվանումը, հայերենում մարմեդիացիներին տրվող «մար» էթնանվան հետ չշփոթելու համար:

<sup>6</sup> Անվան լրիվ թարգմանությունը. «the island tribes from the Red Sea/ Կարմիր ծովի կղզիների ցեղեր»:  
 Հանձինս Կարմիր ծովի, այստեղ նկատի է առնված ժամանակակից Պարսից ծոցը:

ու բակտորիացիների միջև տեղակայելու պարագայում: Աշխարհագրական կարգով թվարկվելու դեպքում այդ միավորները, ինչպես Դարեհի երկրացուցակներում, պետք է տեղ գրավեին Հարավ-արևմուտք խմբում:

Այդ դեպքում նրանք կթվարկվեին նախորդ՝ Հարավ-արևելք երկրախումբը եզրափակող ուտիներից, միկերից ու պարիկանիներից հետո, որոնք հին հույների համար ոչ առաջնային կամ գուցե լրիվ անհայտ էթնիկ միավորներ էին:

Բայց Հերոդոտոսը կամ նրա օգտագործած աղբյուրի հեղինակը հավանաբար «ուղղել» է այդ «սխալը» և հին աշխարհի ամենահայտնի այդ միավորները տեղադրել ցուցակի սկզբում, Պարսքից, Մարաստանից և աքեմենյան ամենահայտնի ևս 2 միավորներից անմիջապես հետո:

Կարծում ենք, որ Հերոդոտոսի զորացուցակը առավել անմիջական պատկերացում է տալիս դահյուներում ընդգրկված տարածքային միավորների վերաբերյալ, որոնք, ինչպես ենթադրեցինք նույն Հերոդոտոսի սահմանումներից մեկով, հանդիսացել են ազգատարածքները: Հնարավոր է, որ այդ ցուցակում նշված են եղել Աքեմենյան տերությունում ընդգրկված, զինական կարողություններ ունեցող բոլոր ազգությունները, բայց հույն հեղինակները այն խմբագրել և Ջորացուցակում թողել են միայն իրենց ինչ որ չափով հայտնի միավորները: Սրանով կարելի է մեկնաբանել այն, որ հին հույներին առավել հայտնի Հյուսիսարևմուտք տարածաշրջանում հիշատակված են մի քանի անգամ ավելի շատ միավորներ, քան մյուս 4 տարածախմբերում:

Որոշ դեպքերում Հերոդոտոսի զորացուցակը նույնիսկ ավելի ճշգրիտ է, քան Դարեհի երկրացուցակները: Օրինակ, բոլոր երկրացուցակներում իրենց աշխարհագրական տեղակայությանը չհամապատասխանող տեղում նշված Ամյուրգյան սկյութները Ջորացուցակում նշված են ճիշտ տեղում՝ Հյուսիս-արևելք խմբում: Ջորացուցակում իրենց տեղակայությանը համապատասխանող Հարավ-արևմուտք խմբում են տեղակայված եթովպացիներն ու լիբիացիները, որոնք DNA երկրացուցակում (Նուբիա, Լիբիա) նշված են Հյուսիսարևմուտքում: Այդ ցուցակում նույն խմբում է հիշատակված նաև Մական, որը ներկայացնող էթնոմիավորը (միկեր) Ջորացուցակում նշված է իր տեղակայությանը համապատասխանող Հարավ-արևելք խմբում:

Անհրաժեշտ է նկատի առնել, որ ի տարբերություն Աքեմենյան տերության վարչատարածքային կառուցվածքը ներկայացնող Դարեհի երկրացուցակների, Հերոդոտոսի զորացուցակը վերաբերվում է Աքեմենյան ռազմական կառուցվածքին: Իսկ այն հանգամանքը, որ այդ զորացուցակում ընդգրկված էթնիկ զորամիավորները նույնպես, ինչպես Դարեհի երկրացուցակներում դահյուները, բաժանված են 5 ենթախմբերի, ենթադրում է, որ Աքեմենյան վարչատարածքային և ռազմական կառույցներն ունեցել են միևնույն՝ «1+4» ձևատիպի կառուցվածք: Սրանք կարող էին լինել մեկը մյուսով թելադրված կառուցներ<sup>1</sup>: Այսինքն հնարավոր է, որ 5 հիմնատարածքներից բաղկացած Աքեմենյան տերությունն իր վարչատարածքային կառուցվածքին ուղիղ համեմատական բաժանվել է 5 ռազմական շրջանների:

Ենթադրվում է, որ Աքեմենյան տերությունը բաժանված է եղել 4, իսկ ինչ որ ժամանակահատվածներում՝ 6 կամ 7 ռազմական շրջանների<sup>2</sup>: Բայց Հերոդոտոսի զորացուցակը, ինչպես տեսնում ենք, ոչ միայն վկայում է 5 ռազմական շրջանների գոյությունը, այլև ցուցում դրանց կոնկրետ տեղակայությունն ու դրանցում ընդգրկված զորական միավորները:

<sup>1</sup> Այսպես ենթադրելու ուղղակի հիմք է տալիս Քսենոփոնը, ըստ որի, Կյուրոս Մեծն իր տերության քաղաքացիական կարգերը հաստատել է ռազմական կարգուկանոնի օրինակով (Cyropaedia, 8.1(14-15) // Xenophon in Seven Volumes, 5, 6. Cyropaedia; W. Miller; William Heinemann, Ltd., London. 1914; URL: <http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=Perseus:text:1999.01.0204>):

<sup>2</sup> Meyer E., Geschichte des Altertums, Band 3; Stuttgart-Berlin, 1915, S. 74-75; URL: <https://archive.org/details/geschichtedesalt03meyer/page/75>; Пьянков В., „История Персии” Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н.э.”; ВДИ, 1965, N2 (с.35-50), с. 47-49; Dandamaev M., Lukonin V., “The culture and social institutions of ancient Iran”; New York, 2004, p. 222-223; URL: <https://archive.org/search.php?query=creator%3A%22danda+%26+lok%22>:

Հերոդոտոսի համաձայն, հունական հետախուզությանը հաջողվել է Հունաստան արշավող Աքեմենյան բանակի վերաբերյալ ձեռք բերել հանգամանալից տեղեկություններ<sup>1</sup>: Դարեհի երկրացուցակների հետ Հերոդոտոսի զորացուցակի ունեցած ակնհայտ ընդհանրությունները հիմք են տալիս ենթադրել, որ Աքեմենյան բանակի վերաբերյալ հույներն իսկապես ունեցել են բավականին հանգամանալից տեղեկություններ, այդ թվում աքեմենյան շտաբներում կազմված մանրակրկիտ զորացուցակներ:

Կարծում ենք, որ Հերոդոտոսի զորացուցակը պետք է դիտել որպես հույների ձեռքն անցած աքեմենյան սկզբնաղբյուր: Մենք անդրադարձանք այն հարցին, որ հին հույները Աքեմենյան տերության աշխարհագրության վերաբերյալ ունեցել են խիստ աղավաղված պատկերացումներ, ինչը չէր կարող նրանց թույլ տալ կազմել աշխարհագրական բավականին լավ իմացություն պարունակող Ջորացուցակը: Դրա լավագույն հաստատումը նույն Հերոդոտոսի սատրապական ցուցակն է, որի աղավաղված աշխարհագրությանը, ինչը հակասում է իր իսկ ներկայացրած Ջորացուցակին, անդրադարձանք վերևում:

Հերոդոտոսի զորացուցակը կարելի է համարել Դարեհի երկրացուցակների մանրամասնված տարբերակը: Եթե երկրացուցակներում նշված են միայն դահյունները, ապա Ջորացուցակը պատկերացում է տալիս այն ազգատարածքների մասին, որոնցով կազմվել են այդ դահյունները: Միաժամանակ այն կարևոր պատկերացումներ է տալիս Աքեմենյան տերության էթնիկ և ռազմական կառուցվածքների վերաբերյալ, ինչը, կարծում ենք կարող է մեզ օգնել հավելյալ պատկերացում կազմել նաև այդ տերության քաղաքական կառուցվածքի վերաբերյալ:

Աքեմենյան սկզբնաղբյուրների և Հերոդոտոսից հայտնի տվյալների միջոցով մենք որոշ պատկերացում կազմեցինք Աքեմենյան տերության վարչատարածքային, էթնիկ, քաղաքական և ռազմական կառուցվածքների վերբերյալ: Նույն աղբյուրներում տեղ գտած մի շարք տվյալներ ու պատկերացումներ վերաբերում են այդ տերության կառավարման համակարգին: Դրանցից մենք առայժմ կանդրադառնանք հետևյալ պատկերացումներին.

Հույն ողբերգակ Էսքիլեսի «Պարսիկներ» պոեմում, Քսերքսեսի I-ի կողմից Հունաստանի դեմ վարվող այն նույն պատերազմում, որին վերաբերում է Հերոդոտոս զորացուցակը, Աքեմենյան բանակը արքայից արքա Քսերքսեսի I-ի հետ, առաջնորդում են նրան ենթակա չորս զորահրամանատարներ (Ամիսթես, Արտափրենես, Մեգաբատես, Ասթասպես)<sup>2</sup>: Վերջիններիս Էսքիլեսը անվանում է «մեծ արքային հպատակ արքաներ / βασιλῆς βασιλέως ὑποχοι μεγάλου», որոնց մենք այստեղ պայմանականորեն կկոչենք «փոխարքաներ»:

Էսքիլեսի այս պատկերացմամբ, Աքեմենյան վարչաքաղաքական իշխանության առաջին դեմքերը միաժամանակ հանդիսանում են Աքեմենյան բանակի գլխավոր հրամանատարները: Այսինքն, նկարագրվող իրադարձություններին ժամանակակից այս հույն հեղինակի համաձայն, Աքեմենյան տերության կառավարման գլխավոր լծակները գտնվել են արքայից արքայի և նրան ենթակա 4 փոխարքաների ձեռքերում<sup>3</sup>:

<sup>1</sup> Herodotus, VII, 146-148:

<sup>2</sup> Aeschylus, 20-25 (Aeschylus. "Persians"; with an English transl. H. Smyth, Ph. D. Vol. I; London, William Heinemann, Ltd. 1926; URL: <http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=Perseus:text:1999.01.0012>):

<sup>3</sup> Հին հունական աղբյուրները վարչական և ռազմական համատեղված իրավասություն, Աքեմենյան արքայից բացի հաճախ վերագրում են նաև որոշ սատրապների: Քսենոփոնը մի դեպքում համարում է, որ սատրապական և ռազմական իշխանությունները տարանջատվել են (Cyropaedia, VIII, 6(1-3,9,14)), իսկ մեկ այլ դեպքում նա սատրապներին վերագրում է վարչա-ռազմական համատեղված իշխանություն, մանրամասնելով, որ իշխանության այդ երկու թևերը տարանջատվել են միայն սատրապներին ենթակա երկրամասերի կառավարման դեպքում (Economics, 4.9-11 // Xenophon, Economics. Xenophon in Seven Volumes, 4. William Heinemann, Ltd., London. 1979; URL:

<http://data.perseus.org/catalog/urn:cts:greekLit:tlg0032.tlg003>): Այս հարցին անդրադարձած հետազոտողները ենթադրում են, որ սատրապները միայն Դարեհ I-ի օրոք են զրկվել համատեղված իշխանությունից: Կամ այդպիսի իշխանություն ունեցել են միայն իրենց սատրապության տարածքում և միայն առանձին դեպքերում է այդ իշխանությունն ունեցել ավելի լայն ընդգրկում (Meyer E., նշվ. աշխ., էջ 70-75;

Կառավարման նույն կառույցը հստակ ուրվագծվում է հույն մեկ այլ հեղինակ Կտեսիասի «Պարսկականք» կոչվող պատմությունում: Դրա համաձայն, Կամբյուսես II-ն (Ք. ա. 530-522 թթ. ) ունեցել է 4 գլխավոր պաշտոնյաներ (Արտասիրաս, Իզաբատես, Ասպադատես, Բագապատես), որոնք Աքեմենյան արքունիքում ունեցել են ամենամեծ ազդեցությունը: Սրանց է արքան առավել վստահել ու մասնակից է դարձրել իր տերության առաջնային գործերին, այդ թվում ռազմական գործողություններին<sup>1</sup>:

Նույն գործառույթներն ունեցող 4 գլխավոր դեմքեր ենք տեսնում նաև Քսերքսես I-ի արքունիքում (Արտապանոս, Մարդոնիուս, Մատակես, Ասպամիթրես)<sup>2</sup>, որոնց Կտեսիասն համարում է արքայի նկատմամբ ամենամեծ ազդեցությունն ունեցող ամենազորեղ պաշտոնյաները<sup>3</sup>:

Նման պատկեր ենք տեսնում Կտեսիասին ժամանակակից մեկ այլ հույն պատմիչ Քսենոփոնի «Անաբասիսում»․ - ճակատամարտի զնացող աքեմենյան բանակն Արտաքսերքսես II-ի (Ք. ա. 404-359 թթ. ) հետ գլխավորում են նրա 4 զորահրամանատարները<sup>4</sup>:

Նույն կառույցն ունեցող կառավարման համակարգի վերաբերյալ ավելի մանրամասն պատկերացումներ ենք տեսնում Քսենոփոնի մյուս աշխատությունում՝ «Կյուրոպեդիայում»․

Իր վերջնական հաղթանակի կապակցությամբ կազմակերպված զորահանդեսից հետո Կյուրոս Մեծը հանդիսավոր ճաշկերույթի է հրավիրում իր կողմից առավել բարձր գնահատված պարսից և դաշնակից ազգերի զորքերի առաջնորդներին, որոնցից անվանական կամ կոչմամբ կարևորվում են միայն չորսը՝ մարական, հայկական, հյուրկանական և ասորական զորքերի հրամանատարները<sup>5</sup>:

Հաջորդ պարբերություններում Քսենոփոնը խոսում է այն մասին, որ ճաշկերույթի ներկայացած հյուրերին Կյուրոսը հատկացնում է իր կողմից նրանց տված գնահատականին կամ պատվաստիճանին համապատասխանող տեղեր: Ամենաբարձր պատվաստիճանի արժանացածին Կյուրոսն նստեցնում է իր ձախ կողմում, աստիճանով հաջոր-

---

Dandamaev M., Lukonin V., նշվ. աշխ., էջ 100-103): Հնարավոր է, որ համատեղված ավելի լայն իշխանություն ունեցող այս սատրապների կերպարում թաքնված են արքայից արքայի հետ իշխանության ամենավերին աստիճաններին տեղ գրաված, վարչա-ռազմական համատեղված իշխանություն ունեցող այն նույն 4 փոխարքաները, որոնց նկատի է ունեցել Էսքիլեսը: Այս և մեր քննության ընթացքում ծագող այլ հարցեր առավել խորը քննության անհրաժեշտություն ունեն, ինչին առավել հանգամանակից կանդրադառնանք առաջիկայում:

<sup>1</sup> Ctesias, XII-XIII, 9-10, 13, p. 91-92 (The complete fragments of Ctesias of Cnidos; by A. Nichols. University of Florida, 2008; URL: [http://etd.fcla.edu/UF/UF0022521/nichols\\_a.pdf](http://etd.fcla.edu/UF/UF0022521/nichols_a.pdf)):

<sup>2</sup> Ctesias, XII-XIII, 24, 27, 28-29, 31, 33, p. 93, 94:

<sup>3</sup> Կտեսիասն այս պաշտոնյաներին կոչում է «εὐνοῦχοι / eunouchoi»: Այսպես կոչվել են պալատական ներքինացված / ամորձատված ծառայողները, ինչը և հետևում է այդ անվանման ստուգաբանությունից (տես - Lenfant D., "Ctesias and his Eunuchs: a Challenge for Modern Historians"; Histos / The On-line Journal of Ancient Historiography, 2012, 6; p. 257-297;

URL:<https://research.ncl.ac.uk/histos/documents/2012A12LenfantCtesiasandhisEunuchs.pdf>):

Նույն անվանը վերագրվում է նաև այլ նշանակություն և ենթադրվում, որ այն մի դեպքում տրվել է պալատական ներքինացված ծառայողներին, իսկ մյուս դեպքում՝ բարձրաստիճան պաշտոնյաներին (Briant P., նշվ. աշխ., էջ 274-276): Կարծում ենք, որ «εὐνοῦχοι» բառի վերաբերյալ Կտեսիասի ունեցած ընկալումը ճիշտ հասկանալու համար պետք է ուղեկցվել ոչ թե այդ բառի ստուգաբանությամբ, այլ նրանով, որ հույն պատմիչն այդ կոչմամբ նկատի է ունեցել Աքեմենյան արքաների ամենավստահելի և տերության ամենաառաջնային գործերին մասնակից, ամենազդեցիկ ու զորեղ պաշտոնյաների: Այս բնութագրիչներով Կտեսիասի 4 պաշտոնյաները համադրվում են Էսքիլեսի ու Քսենոփոնի նկատի առած 4 գլխավոր պաշտոնյաներին, որոնց այս հեղինակները համարում են արքայից արքային ենթակա արքաներ կամ նրա հետ Աքեմենյան բանակն առաջնորդող գլխավոր զորահրամանատարներ: Կարծում ենք, որ Կտեսիասի նկատի առած 4 առաջնային պաշտոնյաները Աքեմենյան կառավարման համակարգում գրավել են այն նույն տեղը, ինչ տեղ որ, համաձայն Բեհիսթունի տարեգրության և հին հունական աղբյուրների գրավել են Դարեհի գահակալությանը զորավիգ դարձած համախոհները: Դրանք վեցն են, բայց որոշ տվյալներ մեզ հանգեցրել են այն ենթադրությանը, որ նրանցից առավել բարձր դիրք գրավել են չորսը (այս հարցին մանրամասն կանդրադառնանք առաջիկայում):

<sup>4</sup> Anabasis I, 7(12) (Xenophon in Seven Volumes 2-3, Anabasis; C.L. Brownson; W. Heinemann, Ltd., London, 1922; URL: <http://www.perseus.tufts.edu/hopper/text?doc=Perseus:text:1999.01.0202>):

<sup>5</sup> Cyropaedia, 8.4(1):

դին՝ աջ թևում, երրորդին՝ նորից ձախում, չորրորդին՝ նորից աջում: Այս կարգով՝ ձախ-աջ հաջորդականությամբ, թվարկվում է 4 աստիճանատեղ, որից հետո Քսենոփոնը հաղորդում է, որ ավելի շատ հյուրերի դեպքում նրանց տեղեր են հատկացվել նույն կարգով, վերջում հավելվելով, որ այս կարգը գոյություն է ունեցել նաև իր ժամանակներում<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, այս նկարագրությունում նույնպես արքայից արքայի կողքին ամենամոտ տեղեր գրավելու, հետևաբար առավել բարձր իշխանություն ունենալու իրավունքը վերապահվում է 4 իշխանավորների:

Հույն հեղինակների ներկայացված պատկերացումներով ուրվագծվում է Աքեմենյան տերության կառավարման գլխավոր համակարգի պարզ՝ «Արքայից արքա + 4 փոխարքաներ/գորահրամանատարներ» կառուցվածքը: Ակնհայտ է, որ այն ունի այն նույն՝ «1+4» ձևատիպը, ինչպիսին մենք տեսանք Աքեմենյան տերության «Կենտրոն + 4 կողմնակալություններ» վարչատարածքային կառուցվածքի դեպքում: Կարծում ենք, որ սրանք կարող էին լինել մեկը մյուսով թելադրված կառույցներ: Այսինքն, եթե Աքեմենյան տերությունն ունեցել է 5 գլխավոր վարչատարածքային միավորներ, ապա դրանք, հանձինս արքայից արքայի և նրան ենթակա 4 փոխարքաների, պետք է կառավարեին 5 բարձրագույն իշխանավորներ:

Հանձինս արքայից արքայի 4 գլխավոր գործակալներից կազմված ինստիտուտի, հին հունական ներկայացված աղբյուրներում ուրվագծվում է Աքեմենյան տերության կառավարման մի օղակ, որը միջանկյալ տեղ է գրավում գերագույն իշխանության՝ արքայից արքայի և դահյուները կառավարող սատրապական համակարգի միջև: 4 բարձրագույն աստիճանավորներից կազմված կառավարման այս ինստիտուտի միջոցով, ինչպես ենթադրել են տալիս նույն աղբյուրների ու Աքեմենյան երկրացուցակների համադրությունը, Աքեմենյան արքան կառավարել է իր տերության հիմնականում սահմանային երկրամասերը ներառող 4 կողմնակալությունները: Իսկ դրանցով շրջապատված, տերության կենտրոնական երկրամասերն ընդգրկող տարածքային գլխավոր միավորը, նույն աղբյուրների առաջադրած վարկածով, կառավարել է անմիջապես ինքը՝ արքայից արքան:

Սույն քննությամբ մենք անդրադարձանք Աքեմենյան տերության կառուցվածքին և կառավարման համակարգին: Այդ մասին առկա են շատ ավելի մանրակրկիտ պատկերացումներ ու տվյալներ: Այստեղ մենք բավարարվեցինք հիմնականում ընդհանրական պատկերացում տվող տվյալների անդրադառնալով: Առաջիկա քննությունում կփորձենք այդ մասին առավել անմիջական ու խորը պատկերացումներ կազմել, հենվելով շատ ավելի լայն աղբյուրային բազայի վրա:

**Мурад Оганян, О СТРУКТУРАХ И ПОРЯДКАХ УПРАВЛЕНИЯ АХЕМЕНИДСКОЙ ДЕРЖАВЫ.** Это предварительное исследование, касающееся структуры и порядков управления Ахеменидской державы, основано пока только на ахеменидских и соответствующих им древнегреческих источниках. Из анализа представленных в летописях Дария I списков стран следует, что Ахеменидская держава состояла из 5 крупных административно-территориальных единиц. Главная из них включала центральные районы державы, а остальные четыре территории были размещены вокруг главной единицы и охватывали в основном крайние, приграничные регионы. Раскрытие этой структуры, имеющей форму «Центр + 4 периферии», дает нам ключ, который позволяет выявлять приоритетные вопросы, касающиеся структуры и системы управления Ахеменидской державы. В частности выявляется, что структуру той же - «1 + 4» формы имела и базовая система управления Ахеменидской державы («Царь царей + 4 наместника»), и Ахеменидская армия («Центральный военный округ + 4 периферийных военных округа»), и система военного управления («Верховный главнокомандующий + 4 главнокомандующих»). С тем же ключом получают ответы на многие другие вопросы, касающиеся Ахеменидской державы.

<sup>1</sup> Cyropaedia, 8.4(3-5):



**Ключевые слова:** Ахеменидская держава, Дарий, система управления, военное управление, царь царей, главнокомандующий, административно-территориальная единица, летопись, список стран, 1+4.

**Murad Ohanyan, ABOUT THE STRUCTURES AND ORDER OF ADMINISTRATION OF THE ACHAEMENID EMPIRE.** This preliminary study concerning the structure and order of government of the Achaemenid Empire is still based only on the Achaemenid and ancient Greek sources agreed with them. The study of the lists of countries in the inscriptions of Darius I shows that the Achaemenid Empire consisted of 5 large administrative-territorial units. The main of them included the central regions of the Empire, and the remaining four basic territories were located around the main land, including mostly the frontier, border regions. By disclosure of the structure having "Center + 4 peripheral regions" model we get a key allowing us to reveal very important questions concerning the structure and government order of the Achaemenid Empire. In particular, it is revealed that the basic administrative system of the Achaemenid Empire ("King of Kings + 4 governors"), Achaemenid army ("central military district + 4 peripheral military districts"), military command and control system ("commander in chief + 4 commanders) had the structure of the same "1 + 4" model too.

**Keywords:** Achaemenid Empire, Achaemenid army, Darius, control system, government, administrative system, military districts, military command, inscription, list of countries, 1+4.